**ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ**

**ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

# ՈՐՈՇՈՒՄ

**2019 թվականի մարտի 1-ի N 10 - Լ**

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2016թ. փետրվարի 4-ի թիվ 138-Ն որոշմամբ հաստատված <<Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան>> հիմնադրամի կանոնադրության 48-րդ կետի 4-րդ ենթակետով, ՀՀ կրթության և գիտության նախարարի 2017թ. նոյեմբերի 7-ի թիվ 1282-Ն հրամանով հաստատված <<ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգով>>, ՀՊՄՀ գիտխորհրդի 2018թ. սեպտեմբերի 26-ի թիվ 4-Լ որոշմամբ հաստատված <<ՀՊՄՀ շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգով>> և լսելով Համալսարանի հեռակա ուսուցման համակարգի 2019-2020 ուսումնական տարվա շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման քննությունների մասին (զեկ.՝ պրոռեկտոր Մ.Մելիք-Բախշյան)՝

**Գիտական խորհուրդը որոշում է.**

1. 2018-2019 ուսումնական տարվա հեռակա ուսուցման համակարգի բակալավրի կրթական ծրագրի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման հանրագումարային գնահատականը ձևավորել հետևյալ երկու բաղադրիչներով.

   ա) ավարտական աշխատանք՝ 80 տոկոս մասնաբաժին,

   բ) մասնագիտական առարկայի դասավանդման մեթոդիկա՝ 20 տոկոս մասնաբաժին:

2. 2019-2020 ուսումնական տարվանից հեռակա ուսուցման համակարգի բակալավրի կրթական ծրագրի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման հանրագումարային գնահատականը ձևավորել հետևյալ երկու բաղադրիչներով՝

   ա) մանկավարժական և/կամ ուսումնական պրակտիկաների միջին գնահատականը՝ 20 տոկոս մասնաբաժին.

   բ) ավարտական աշխատանք՝ 80 տոկոս մասնաբաժին:

**ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

**ՌՈՒԲԵՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ**